ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԵՐԵԿՈ

Հայրենասիրությու՞ն...կասի գրեթե յուրաքանչյուր հայ իր գերակա արժեքները սահմանելիս: Իսկ ի՞նչ է հայրենասիրությունը: Առաջին հերթին այն սերն է պետության և պետականության հանդեպ: Իսկ կարելի՞ է սիրել մի բան, ինչն այդքան էլ լավ չես ճանաչում. մեր համոզմամբ՝ ոչ: Նման սերը չի կարող անսասան ու վճռական մնալ այն մարտահրավերների առջև, որոնց բախվում են մեր հայրենիքն ու պետականությունը: Հստակ գիտակցելով այս խնդրի կարևորությունը՝«Մենք» հիմնադրամը և «Մենք Փրոդաքշն» ընկերությունը նախաձեռնել են պատմական և ազգային խորհրդանշանների վերականգնման և հանրայնացման ծրագիր: 2005 թ-ից ի վեր կազմակերպություններն իրենց գործունեությամբ գլխավորապես նպատակ են ունեցել հասարակության շրջանում բարձրացնել պետական և ազգային կարևորագույն խորհրդանշանների հանդեպ արժևորման գիտակցությունը: Մեր խորին համոզմամբ՝ առանց անցյալը արժևորելու արժանապատիվ ապագա չես կառուցի:

Սեպտեմբերի 21-ին տեղի կունենա «Թագավորական երեկո» միջոցառումը, որի ընթացքում արվեստագիտության թեկնածու, դոցենտ Սաթենիկ Չուգասզյանը կներկայացնի հայ թագավորների և թագուհիների հանդերձանքը, ինչպես նաև վերջիններիս պատվերով կամ նրանց օրոք ստեղծված չքնաղ գանձերը: Երեկոն անց է կացվելու Հայաստանի ազգային պատկերասրահի ընդարձակ «Որմնանկարների սրահում», որտեղ հյուրերը կտեղափոխվեն մի հոգևոր աշխարհ՝ շրջապատված հայկական հայտնի եկեղեցիների ու վանքերի եզակի որմնանկարների բացառիկ կրկնօրինակներով և բնօրինակներով՝ համակված հոգևոր ու ազգային ուժեղ ոգով: Այնուհետև հյուրերը կունկընդրեն հայկական ազգային դասական առաջին օպերայի՝ Տիգրան Չուխաջյանի Արշակ Բ-ի դրվագները տաղանդավոր հայ երաժիշտների կատարմամբ: Միջոցառմանը ներկա են լինելու ՀՀ կառավարության անդամներ, ՀՀ ԱԺ պատգամավորներ, գիտության և կրթության ոլորտի մասնագետներ, խոշոր ընկերությունների սեփականատերեր, գործադիր ղեկավար անդամներ, օտարերկրյա դեսպաններ, հյուպատոսներ, միջազգային կազմակերպությունների ղեկավարներ և ներկայացուցիչներ: Միջոցառման ավարտին հյուրերը հնարավորություն կունենան նկարվելու հայ հզոր թագավորների և արվեստասեր թագուհիների հանդերձանքներով: Նման նկարների տարածումը ևս մեկ առիթ կլինի միջազգային հանրությանը հաղորդ դարձնելու մեր ազգային մշակույթին և պատմությանը:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼՈՒ ԵՆ՝

ՏՐԴԱՏ Գ ՄԵԾ ԱՐՇԱԿՈՒՆԻՆ և ԱՇԽԵՆ ԹԱԳՈՒՀԻՆ՝ 3-4-ՐԴ ԴԴ.

ԳԱԳԻԿ ԱՐԾՐՈՒՆԻՆ ՝ 10-ՐԴ ԴԱՐ

ԳԱԳԻԿ Բ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ և ԳՈՐԱՆԴՈՒԽՏ ԹԱԳՈՒՀԻՆ՝ 11-ՐԴ ԴԱՐ

ՉԱԲԵԼ ՌՈՒԲԻՆՅԱՆ ԹԱԳՈՒՀԻՆ՝ 13-ՐԴ ԴԱՐ

ԼԵՎՈՆ և ԿԵՌԱՆ ՀԵԹՈՒՄՅԱՆՆԵՐԸ՝ 13-ՐԴ ԴԱՐ